ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 52 68 44
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

28.10.2014 N 11/ԺԴ/22.1/11301-14

Ձեր N _____

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» Հ/Կ-Ի ՆԱԽԱԳԱՀ,

«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ

ՊԱՐՈՆ ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր 2014 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ h-86-h-4 գրության հայտնում եմ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ *դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է*, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին:

ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կենտրոն) հայտատուների հետ կնքում է «Փորձագիտական ծառայությունների մատուցման» պայմանագիր, որում հստակ սահմանվում է Կենտրոնի պարտավորությունը ինչպես փորձագիտական աշխատանքների ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո առանց հայտատուի նախնական համաձայնության չբացահայտել և երրորդ անձանց չտրամադրել իրեն տրամադրված տեղեկատությունները:

Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի՝ կառավարության լիազորած մարմինը երաշխավորում է ստացված տեղեկատվության գաղտնիությունը:

Ուստի հայտնում ենք, որ առանց համապատասխան թույլտվության Կենտրոնը չի կարող տրամադրել հարցվող փաստաթղթերի, այն է՝ Արտադրող երկրի գրանցման հավաստագրի, ՊԱԳ (ՊԱԳ կամ GMP) հավաստագրի, այլ երկրներում գրանցման մասին տեղեկատվության, դեղի և դրա ակտիվ ու օժանդակ բաղադրամասերի որակի հավաստագրերի, ինչպես նաև կողմնակի ազդեցությունների դիտարկման պարբերական հաշվետվությունների կրկնօրինակները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՔԱՐՏՈՒՂԱՐԱՆ
СЕКРЕТАРИАТ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Կատարող՝ Վարդուհի Գրիգորյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային
քաղաքականության վարչություն
հեռախոս 52 27 21